




ՄԱՅՏՄ. Ա. ՄԸՆՏԻԿԵԱՆ - Խափշիկի գլուխ:
(Թանգարան Ս. Ղազարու)

կանօրէն նաեւ սկիզբն է՝ նկարչութիւն
համար՝ արուեստի նոր շրջանի մը» (Il
Cardo, Fam. Art. Mil. 1959, n° 5-6, pg.
43):

Մայրա Ա. Մընտիկեանի Վերջին գործերէն մէկն է, թարմ իւզով, Քրիստոսի խաչելութիւնը (մեծ. 100×150), գրծուած Միլանի Հայ եկեղեցւոյն համար. արուեստի կատարեալ գործ մը արդարեւ. զգացումի եւ գոյներու գերազանց արտայայտութեամբ:

Մենք կը մաղթենք տաղաւին նորանոր
յաղթանակներ մեր ազնիւ նկարչուհիին :
Մաղթանքին հետ բաղձանք մըն ալ ու-
նինք . բաղձանք մը՝ որուն իրագործումը
անշուշտ պիտի դայ լրացնել Մընտիկեանի
տարիներու երազը : Իր քննադատները
միշտ կը մատնանշեն հայ ծագումը եւ
նոյնը կը նշմարեն իր նկարներուն ընդմէ-
ջէն . բայց ասոնք մեծ մասով Իտալական
միջավայրէն ներշնչուած կտորներ են .
Պոլսոյ այցելութեան առթիւ է որ , կը
կարծենք , արեւելեան գոյնը աւելի եւս
փայլեցաւ : Մենք կը բաղձանք որ Մայտա
Մընտիկեանի եւս ժպտի բախտը , այցե-
լելու Հայաստան , մօտէն ծանօթանալու
Երեւանի նկարչութեան Գեղարուեստի
Հաստատութեան Վարչութեան հետ , հայ
նկարիչներուն հետ , տեսնելու հայրենի
երկրին իսկական գոյներն ու ցոլքերը ,
ներշնչուելու համար հայ հարազատ բնա-
նկարով , Մասիսներու վերջալոյսի բոսո-
րով , Երասխի յորձանքներով , Սեւանի
ծփանքներով , Արարատեան դաշտի չքնաղ
ծաղիկներով :

Կը մաղթենք որ իրականանայ այդ՝ առաջիկայ տասնամեակի արշալոյսին խաղ: Վստահ ենք թէ անկէ վերջ, ո՛չ միայն հայ նկարազօրն ու կամքն է որ պիտի ցոլան Մընտրիկեանի նկարներուն մէջէն, այլ նաեւ հայ բնիկ երանգները, Արարատի նման՝ յաւերժութեան զաղտնիքով առկուն:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

վ Ա Ն Ք

վաճառք, ուրիշ էս օր մը անցալ դեռահասակ,
Երբ կեանքը դեռ խոստումներով էր պարզուն,
Պիտ'ուզէի կամարներուդ երկնքին տակ
Վերադառնել հին կախարդանքն երազներուն :

Հիսուսի հոգևոյս վառ ճաճանչները ոսկեղէն՝
Որոնցմով սէրը ծաղկեցաւ ինծի համար,
Եւ դեռ յղկել ձիւնամարմին քարը մարմար
Հանուած Յոյսի խորախորհուրդ ընդերքներէն:

Պիտ'ըլլայի ես արեղայ մը դալկահար,
Բայց լիշապները սուրբերէն զիս խըլեցին,
Պարուրեցին պատմութեանով մը բոցալառ...

Հիմա կու գամ ըստուերիդ մէջ աղօթամած
Յիշել, որ սիրտս էի երբեմն ընծայած
Անմեղութեան լուսահեղեղ պատարադին...

4 U U U U U

Յաղթանակի: Բայց մահուան մեծ խորհուրդին տակ,
Որ ինքն ալ միշտ կամար մըն է գիշերական,
Մարմարահիւս քանդակներով չրիմներ կան,
Ուր լըռութիւնն է քարացեր անյիշատակ:

Ո՛ւ է մէկ-անուն. ո՛ւ է մէկ լուսեղ թըւանըւան.
Սըկիհ մը լուկ՝ ուր կ'ըմպէ օձ մը գալարուն.
Կը սեւեռի շուրջը հսկող գիմակներուն
Մութ կերպարանք մը տանջանքով թախանձական:

Եթէ ննջող ժը արթըննար եւ անցեալին
Գաղտնիքն ըսէր, երգը Սիրոյ, Ատեւութեան...
Բայց գերեզմանը կնքըւած է յաւիտեան.

Երբ հոն չըթեւերը որդնահար դեռ կ'արիւնին,
Անոնց երգումը մըռննչող՝ Յաղթանակի
Ձայն մը յանկարծ ահեղօրէն կը փոթորկէ...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ